ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկն է:

Ներքին զբոսաշրջության խթանումը ներկա պայմաններում կապահովի նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների գործունեությունը համայնքում, կնպաստի բնակավայրերի սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացմանը:

Արաքս համայնքն ունի զբոսաշրջային մեծ պոտենցիալ: Համայնքում առկա են զբոսաշրջության տեսակներից՝ մշակութային և գյուղական տուրիզմ:

Առատաշենի գինու գործարան

Արաքս համայնք այցելելիս առաջին հերթին կարող եք այցելել և տեսնել Առատաշենի գինու գործարանը, որը հիմնադրվել է Արաքս համայնքի Առատաշեն գյուղում:
Այն գինեգործության գոհար է, որն արտացոլում է տարածաշրջանի հարուստ պատմությունն ու մշակույթը:
Այս գինեգործարանը, որը գտնվում է Առատաշեն բնակավայրի Կոմիտասա 1/3 հասցեում, հայտնի է իր բացառիկ գինեգործական ավանդույթով:

Այստեղ դուք կարող եք խաղողի այգիներով շրջապատված հյուրատան շքապատշգամբից վայելել նախընտրելի գինին՝ վայելելով բնության կողմից տրված հրաշալի տեսարանը:

Այս ամենին գումարվում են հեծանվային տուրերը, հայկական ազգային խոհանոցի ուտեստները, գինիների համտեսն ու վարպետության դասերը:

Aratashen Winery մասին ավելի մանրամասն կարող եք տեսնել [այստեղ:]

Առատաշեն բնակավայրում՝ մշակույթի տան կողքին, գյուղի կենտրոնում գտնվում է Առատաշեն գյուղի եկեղեցին:
Այստեղ կարելի է այցելել մասնակցելու կիրակնօրյա սուրբ և անմահ պատարագներին:
Կարելի է մասնակցել տաղավար տոներին նվիրված հանդիսավոր միջոցառումներին:
Պատարագները սովորաբար նվիրված են որոշակի դեպքերի ու անձերի ոգեկոչումներին կամ ուղղակի միջոց են հոգևոր խորհրդածությունների:



Գայի Սուրբ Նշան սոցիալական մշակութային կենտրոն

Սուրբ Նշան եկեղեցին գտնվում է Գայ բնակավայրի կենտրոնական հատվածում:
Հավատացյալներն ամեն կիրակի հնարավորություն ունեն մասնակցելու սուրբ պատարագին:
Այստեղ տաղավար տոների պատարագներից զատ, կարելի է մասնակցել տոներին նվիրված միջոցառումներին:

Հայ Առաքելական Սուրբ Նշան եկեղեցին մեծ շուքով և հանդիսավորությամբ է նշում տաղավար տոները:
Ամեն տարի մեծ շուքով նշվում է նաև Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը, որի ժամանակ այցելուները պատարագի ավարտից հետո կարողանում են հյուրասիրվել օրհնված խաղողից:
Սուրբ Նշան սոցիալական մշակութային կենտրոնը հնարավորություն է տալիս նաև երեխաներին սովորել՝ կավագործություն, ասեղնագործություն, նկարչություն, եկեղեցական «Նշան» երգչախմբում երգել:

Նկարչության խմբակի երեխաները մշտապես մասնակցում են մրցույթների և պարբերաբար վերադառնում են հաղթնակներով, այնտեղ էլ՝ եկեղեցու պատկերասրահում, ցուցադրված են այդ աշխատանքները:
Գայի Սուրբ Նշան սոցիալական մշակութային կենտրոնի հետ կարող եք կատարել ուխտագնացություններ դեպի ՀՀ տեսարժան վայրեր, Արևմտյան Հայաստան՝ Անի, Կարս, Բայազետ, Բերկրիի ջրվեժ, Վան, Միերի դուռ, Աղթամար կղզի, Վանա կատուների բուծարան, Բիթլիս, Մուշ, Սուլուխի կամուրջ, Էրզրում, Հովվի կամուրջ:

Մեր համայնքի գործառությունների մեջ է երիտասարդների առողջ ապրելակերպին նպաստելը:
Գայ բնակավայրում գործում է միջազգային չափանիշներին համապատասխան մարզադաշտ:
Ֆոիտբոլասերներն այնտեղ կարող են ներկա գտնվել համայնքային ֆուտբոլային մրցաշարերին և փորձել իրենց ուժերը ֆուտբոլում:

Ջրառատ բնակավայրի «Սիմոն Մարտիրոսյանի անվան մարզադպրոց»

Մանուկների և պատանիների ֆիզիկական զարգացման, առողջ ապրելակերպի և մարզական հերթափոխի պատրաստման նպատակով մինչև 18 տարեկան պատանիների և աղջիկների համար Ջրառատ բնակավայրում գործում է Սիմոն Մարտիրոսյանի անվան մարզադպրոցը: